
ՈՐՈՇԻՉ-ՈՐՈՇՅԱԼԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

ՆԵՐՄԻՍՅԱՆ Շ. Գ.

Ժամանակակից հայերենում և գերմաներենում որոշիչ-որոշյալ կապակցության մեջ կիրառվում են շարահյուսական կապակցության երեք հիմնական եղանակները՝ առդրություն, համաձայնություն և խնդրառություն: Կախված այն բանից, թե ինչ խոսքի մասով է արտահայտված տվյալ որոշիչը, նշված լեզուներում տարբեր կերպ է կիրառվում կապակցության այս կամ այն եղանակը: Հայերենում և գերմաներենում որպես որոշիչ հիմնականում հանդես են գալիս ածականները, թվականները, իսկ երբեմն՝ որոշ դերանուններ, դերբայներ, բառակապակցություններ և այլն:

Գոյականական գերադաս անդամով որոշյալը և իր որոշիչ լրացումները ժամանակակից հայերենում իրար հետ կապակցվում են առավելապես առդրությամբ՝ ի տարբերություն գրաբարի, որին հատուկ էր համաձայնությունը, ինչպես՝ միով բանի, մեծաւ մասամբ և այլն¹: Առդրական կապակցության դեպքում որոշիչը փոփոխություն չի կրում գերադաս անդամի քերականական հատկանիշների պահանջով, այսինքն՝ այն կախման մեջ չէ գերադաս անդամից, հարաբերության մեջ է մտնում առանց քերականական կախվածության, առանց ձևային փոփոխության, այլ՝ սուկ իր իմաստով: Որոշիչը որոշյալի հետ կապակցվում է առդրությամբ հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերի և գոյականի ուղղական հոլովի դեպքում, կա՛մ երբ այն արտահայտված է չթեքվող խոսքի մասերով, կա՛մ եթե առկա չէ կապային կառույց²: Այլ կերպ ասած՝ երբ որոշիչը արտահայտված է ածականով՝ սիրուն ծաղիկ, թվականով՝ հինգ ուսանող, չհոլովվող դերանուններով՝ այս գիրքը, մակբայով (հիմնականում՝ բայանուն գոյականի հետ)՝ արագ քայլք, հարակատար և ենթակայական դերբայներով՝ ծաղկած ծառ, խոսող ձուկ, գոյականը՝ ուղղական հոլովով՝ քար սիրտ: Առդրությամբ է կապակցվում նաև ապառնի դերբայը՝ իք վերջավորությամբ, թեև այն մեծ մասամբ վերածվել է գոյականի (ուտելիք), օրինակ՝ ուղարկվելիք գրություն:

Առդրության դեպքում կարևոր փաստ է շարահյուսության հանգամանքը: Ժամանակակից հայերենում սովորաբար լրացումը դրվում է լրացյալից առաջ, բացի բացահայտչից. հաճախ, եթե փոխվում է լրացման տեղը, այն դառնում է այլ գերադաս անդամի լրացում, ինչպես, օրինակ՝ խելացի աշակերտի պատասխանը – աշակերտի խելացի պատասխանը: Տվյալ դեպքում, որոշիչ

¹ Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 1987, էջ 200:

² Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 29:

Որոշիչ-որոշյալի կապակցության եղանակները հայերենում և գերմաներենում 247
դիրքը փոփոխելով, այն դառնում է հաջորդող գոյականական անդամի լրացում³:

Ի տարբերություն հայերենի՝ արդի գերմաներենում որոշիչ-որոշյալի հիմնական կապակցության եղանակ է համաձայնությունը: Նախադասության կամ բառակապակցության գերադաս ու ստորադաս անդամների միջև համաձայնությունը տեղի է ունենում ընդհանուր քերականական կարգերով (սեռով, թվով, հոլովով): Գերմաներենում որոշիչը համաձայնում է որոշյալի հետ, երբ այն արտահայտված է ածականով, հատկանշային իմաստ արտահայտող դերանուններով (ստացական, ցուցական, անորոշ, ժխտական՝ *keine*, և այլն), դասական թվականով, դերբայներով (*Partizip I* և *II*): Այս դեպքում որոշիչը որոշյալի հետ համաձայնում է թվով, հոլովով և սեռով: Օրինակ՝ *der kluge Hund, ein einfaches Wort, meine neue Tasche, der erste Tag, das alte fast zerstörte Haus*⁴:

Հայերենում որոշչի ու որոշյալի միջև համաձայնեցում տեղի է ունենում որոշ դեպքերում, այն էլ՝ մասնակիորեն: Որոշիչն ու որոշյալը համաձայնում են թվով. հոգնակի որոշիչը երբեմն պահանջում է հոգնակի որոշյալ: Օրինակ՝ երբ որոշչի պաշտոնում հանդես եկող ածականն ու գոյականը կրկնվում են՝ մեծ-մեծ խոստումներ, փունջ-փունջ մանուշակներ և այլն, երբ որոշիչներն ունեն բազմության իմաստ՝ բազմաթիվ հարցեր, գույնզգույն կտորներ և այլն, երբ առկա են բազմակի որոշիչներ՝ հակադիր իմաստներով՝ լավ ու վատ օրեր, լայն ու նեղիկ փողոցներ⁵: Քանակական թվականների հետ որոշյալը հիմնականում կարող է լինել եզակի, ավելի քիչ են հոգնակի կիրառությունները: Սովորաբար մեկից բարձր թվականի հետ որոշյալը եզակի է, երբ անորոշ է: Որոշյալը կարող է լինել հոգնակի, երբ գործածվում է հոդերով կամ հոլովված է, օրինակ՝ հինգ ընկերներով, կամ երբ քանակական որոշչի և որոշյալի միջև կա մեկ այլ որոշիչ՝ հարյուր կիսավեր տներ: Սակայն ժամանակակից հայերենում մեկից բարձր թվականների հետ որոշյալը կարող է ունենալ և՛ եզակի, և՛ հոգնակի կիրառություն՝ հինգ տղա / հինգ տղաներ, տասը աթոռ / տասը աթոռներ և այլն: Այս դեպքում որոշյալի հոգնակի կամ եզակի կիրառությունը կախված է որոշյալի արտահայտած իմաստային տարբերությունից. եզակի՝ անձերի կամ իրերի միասնություն, հոգնակի՝ առանձնություն: Թեև հեղինակի սուբյեկտիվ մոտեցումը ևս կարող է որոշակի դեր խաղալ, հմմտ.՝ հարյուր կիսավեր տուն – հարյուր կիսավեր տներ, արցունքի երկու կաթիլ – արցունքի երկու կաթիլներ և այլն: Թվային համաձայնություն կարող է լինել հատկանշային իմաստ արտահայտող դերանունների դեպքում՝ կախված իրենց բառիմաստային առանձնահատկություններից, օրինակ՝ բոլոր դերանվան հետ որոշյալը

³ Նույն տեղում:

⁴ Jung W. Grammatik der deutschen Sprache, Sankt-Petersburg, 1996, S. 139.

⁵ Օհանյան Հ., Ածական անունը ժամանակակից հայերենում, Ե., 1962, էջ 138-140:

դրվում է հոգնակի, ամեն, յուրաքանչյուր, ողջ և այլ դերանունների հետ եզակի թվով և այլն⁶:

Համաձայնությունը՝ որպես կապակցության եղանակ, ժամանակակից գերմաներենում բացակայում է, եթե առկա են չթեքվող ածականներ՝ *die prima Arbeit, die Berliner Mauer, ganz Köln, lila Farbe*, մեկից բարձր քանակական թվականներ (մեկը համարվում է անորոշ հոդ՝ *ein, eine, ein*)՝ *zwei Freunde, hundert Hefte* (թերևս այս պարագայում կարելի է ասել, որ տեղի է ունենում մասնակի համաձայնեցում, գոյականը մեկից բարձր թվականների հետ դրվում է հոգնակի թվով), կամ եթե դերանունը չի թեքվում՝ *allerlei Bücher*, ինչպես նաև որոշ ասացվածքներում կամ կայուն կապակցություններում՝ *auf gut Glöck, Ein unntötz Leben ist ein fröher Tod*, և այլն⁷: Բնականաբար, այս դեպքերում կիրառվում է կապակցության առդրական եղանակը:

Գերմաներենում ևս որոշիչ-որոշյալ կապակցության ժամանակ կարևոր հանգամանք է շարադասությունը: Ինչպես տեսանք, նախադաս որոշիչները, որոշակի բացառությամբ, միշտ համաձայնում են իրենց որոշյալի հետ: Նույն խոսքի մասերով արտահայտված հետադաս որոշիչները չեն համաձայնում, այլ կապակցվում են առդրությամբ՝ *Röslein rot, ինչպես չափ ու քանակ ցույց տվող գոյական-լրացյալների դեպքում*, երբ գոյականով արտահայտված հետադաս որոշիչը դրվում է գրոյական հոդով՝ *eine Flache Wein, drei Liter Bier* և այլն: Սակայն, եթե գոյականով արտահայտված որոշիչը հանդես է գալիս հոգնակի թվով կամ ունենում է ածականական լրացում, ապա որոշյալի հետ համաձայնությունը թվով է՝ *drei Kisten süße Aprikosen (ուղղական) – mit drei Kisten süßen Aprikosen (տրական)*⁸: Դա առկա է նաև թվականների դեպքում՝ *Zimmer 23, das Jahr 1987, Expo 2010*: Մյուս որոշիչները տրոհվում են լրացյալից, իսկ հոլովով և սեռով համաձայնությունը կարող է բացակայել, սակայն պահպանվում է թվով համաձայնությունը՝ *das Mädchen, traurig und erschöpft, ging hinterher...*, *ein Korb mit Blumen, weiße, rote, gelbe...*: Հետադասության դեպքում համաձայնությունը պահպանվում է, երբ գործ ունենք, այսպես կոչված, էլիպտիկ (բացթողումային) կառույցների հետ, երբ որոշիչը անջատվում և տրոհվում է իր որոշյալից՝ *Ich habe den Schal gesucht, den blauen... – պետք է լիներ՝ Ich habe den Schal gesucht, den roten Schal*⁹:

Որոշ հետադաս որոշիչներ, ինչպիսիք են որոշչային մակբայը, ինֆինիտիվը և ինֆինիտիվ կառույցը (անորոշ դերբայ), տրականով և հայցականով գոյականները, կապային կառույցները (Präpositionalkonstruktion), ունեն կապակցության տարբեր եղանակներ:

⁶ Սաստրյան Մ., նշվ. աշխ., էջ 201-203:

⁷ Schendels E. Deutsche Grammatik - Morphologie - Syntax - Text, Moskau, 1979, S. 288.

⁸ Helbig G., Buscha J. Deutsche Grammatik, Ein Handbuch, Leipzig, 1999, S. 595.

⁹ Schendels E., նշվ. աշխ., էջ 288:

Հետադաս որոշյալին մակբայները կապակցվում են առդրությամբ՝ *der Mann dort drüben, սակայն մակբայի հետ կարող է հանդես գալ նաև կապ՝ die Zeitung von gestern, և այլն: Առդրությամբ են կապակցվում նաև ինֆինիտիվը և ինֆինիտիվ կառույցները, որոնք դրվում են անմիջապես որոշյալից հետո, ինչպես՝ die Kunst zu dichten, die Art zu schreiben: Դրանք կարելի է փոխակերպել հատկացուցիչ-հատկացյալ կապակցության՝ die Kunst des Dichtens, die Art des Schreibens: Բայական արժույթի շնորհիվ ինֆինիտիվը ևս կարող է ունենալ իր լրացումները, որոնք ինֆինիտիվի հետ կազմում են ինֆինիտիվ կառույց¹⁰:*

Ժամանակակից հայերենում որոշիչը որոշյալի հետ կապվում է նաև խնդրառությամբ կամ կառավարմամբ: Կապակցության այս եղանակը որոշիչ-որոշյալ-ին առնչվում է այն դեպքում, երբ որոշիչն արտահայտված է այնպիսի խոսքի մասով, որտեղ կա կախվածության հարաբերություն, այսինքն՝ գոյականով՝ արտահայտված հոլովածներով, ինչպես՝ մսով կարկանդակ, քարից տուն, թանով ապուր, թեյի գդալ¹¹: Խնդրառական եղանակով են կապակցվում նաև բայանուն գոյականների լրացումները, ինչպես՝ հանդիպում այգում, զրույց որևէ թեմայով, հարցում ընկերներին, ներկայացուցիչը ռեկտորատում: Որպեսզի բայական լրացումները՝ այսինքն՝ խնդիրն ու պարագան, չփոթեն գոյականի լրացման հետ, որոշիչ դեպքում պետք է արտահայտվեն գոյականի հետ միասին¹²: Խնդրառությունը կարող է լինել նաև միջնորդավորված, այն է՝ գործ ունենք կապային կառույցների հետ՝ լեռան վրայի ձյուն, սեղանի վրայի գիրքը և այլն¹³:

Ժամանակակից գերմաներենում որոշյալին այս եղանակով են կապվում կապական կառույցներով արտահայտված որոշիչները, այսինքն՝ կապ + գոյական կապակցությունները: Օրինակ՝ *die Hoffnung auf bessere Zukunft, die Fahrt nach Berlin: Բնականաբար, ինչպես հայերենում, այստեղ ևս նման որոշիչներ են ստանում բայանուն գոյականները, որոնք գերմաներենում ունեն կոնկրետ խնդրառություն: Կապական կառույցները կարող են ունենալ նաև պարագայական իմաստ, ինչպես՝ die Blumen in der Vase, ein Brief von meinem Freund: Ի տարբերություն հայերենի, որտեղ սեռականով գոյականը կարող է լինել նաև որոշիչ, գերմաներենում այն լինում է միայն հատկացուցիչ: Խնդրառությամբ է կապակցվում նաև հայցականով դրված գոյականական որոշիչը՝ ժամանակի կամ չափ ու քանակի իմաստով: Օրինակ՝ die Sitzung letzten Montag, 50 Euro den Meter: Տրականով դրված գոյականը ևս կապակցվում*

¹⁰ Նույն տեղում, էջ 293:

¹¹ Սեռականով արտահայտված գոյականական որոշիչը հատկացուցչի հետ չփոթելու համար անհրաժեշտ է նշել, որ որոշիչը ցույց է տալիս տվյալ գոյականի՝ ինչի համար օգտագործվելը և ոչ թե պատկանելություն (ինչպես հատկացուցիչն է) կամ տալ ո՞ր հարցը՝ ո՞ր գդալը:

¹² Պապոյան Ա., Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 32:

¹³ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Ե., 1958, էջ 238-239:

Է խնդրառությամբ՝ *unser Kampferguß dem Volk, որպես հազվադեպ կիրառելի կառույց*¹⁴:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ժամանակակից հայերենում և գերմաներենում որպես որոշիչ-որոշյալի կապակցության եղանակ կարող են հանդես գալ երեք հիմնական եղանակներն էլ: Ժամանակակից հայերենում հատկանշային իմաստ արտահայտող բառերը կամ բառախմբերը և գոյականի ուղղական հոլովը կապակցվում են որոշյալի հետ առանց քերականական փոփոխության, այսինքն՝ *առողությամբ՝ սիրուն ծաղիկ – սիրուն ծաղկի*: Արդի հայերենում համաձայնությունը՝ որպես կապակցության միջոց, ի տարբերություն գրաբարի, վերացել է: Սակայն երբեմն տեղի է ունենում թվային համաձայնություն՝ *հոգնակի որոշյի հետ դրվում է հոգնակի որոշյալ*:

Իսկ գերմաներենում, որպես կապակցության եղանակ, հիմնականում կիրառվում է համաձայնությունը: Կապակցության եղանակի կիրառության հարցում որոշակի դեր է խաղում նաև շարադասությունը: Որոշիչը դրվում է լրացյալից առաջ և վերջինիս հետ համաձայնում հոլովով, սեռով և թվով, ինչպես՝ *die blaue Bluse – der blauen Bluse*: Համաձայնությունը բացակայում է չթերվող ածականների, դերանունների, քանակական թվականների դեպքում, ինչպես նաև որոշ ասացվածքների, կայուն կապակցությունների մեջ, և որպես կապակցության եղանակ է հանդես գալիս առողությունը: Համաձայնություն չի լինում նաև որոշյի հետադաս կիրառության ժամանակ (բացի էլիպտիկ կառույցներից): Առողությամբ են կապակցվում նաև որոշյային մակբայները, ինֆիտիվն ու ինֆինիտիվ կառույցները: Հայերենում կապակցության եղանակ է նաև խնդրառությունը, երբ որպես որոշիչ է հանդես գալիս գոյականը՝ *թեք հոլովներում*: Գերմաներենում գոյականի *թեք հոլովները* հիմնականում գործածվում են որպես խնդիրներ, իսկ սեռականով գոյականը՝ *հատկացուցիչ*: Գոյականը մյուս *թեք հոլովներում* որոշիչ է դառնում կապային կառույցներով, այսինքն՝ *կապ+գոյական կապակցություններում*, որտեղ արդեն գործում է կապակցության խնդրառական եղանակը, *հազվադեպ որոշիչ են դառնում նաև հայցականով և տրականով գոյականները*:

СПОСОБЫ СОГЛАСОВАНИЯ ОПРЕДЕЛЕНИЯ С ОПРЕДЕЛЯЕМЫМ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ И НЕМЕЦКОМ ЯЗЫКАХ

НЕРСИСЯН Ш. Г.

Резюме

В современном армянском и немецком языках определения согласуются с определяемым посредством согласования, управления и примыкания. В зависимости от того, какой частью речи выражено данное определение, способы согласования в обоих языках разные. В современном армянском языке слова, обозначающие качество и существительное в име-

¹⁴ Schendels E., նշվ. աշխ., էջ 291-293:

нительном падеже, соединяются с помощью примыкания, а в немецком языке – путем согласования. В армянском языке (в отличие от грабара) согласование как способ соединения вышло из употребления, но в некоторых случаях согласование имеет место в числе. В немецком языке определение не согласовывается, в количественных числительных, поговорках и устойчивых словосочетаниях, а также в тех случаях, когда прилагательные и местоимения не склоняются. В этом случае в качестве способа соединения выступает примыкание. Согласование отсутствует, когда определение является постпозитивным (кроме эллиптических конструкций). Посредством примыкания соединяются наречия, инфинитив и инфинитивные конструкции. В армянском языке определение согласуется с определяемым на основе управления, если оно выражено существительным в косвенных падежах. В немецком языке существительное в косвенных падежах выступает либо в качестве объекта, либо определения в родительном падеже. Существительное в косвенных падежах становится определением с предлогами (т.е. предлог+существительное), где способом согласования является управление.

**TYPES OF AGREEMENT OF ATTRIBUTIVE –CONSTRUCTIONS
IN MODERN ARMENIAN AND GERMAN**

SH. NERSISYAN

Abstract

In Modern Armenian and German, the types of connection of attributive-constructions are adjunction, agreement and governance. In both languages, different methods of connection are used respective of what part of speech an attribute is expressed by . In Armenian, words or word-groups denoting quality and noun in nominative case are connected by the adjunction of the determiner but in German the mostly used connection type is agreement. Though in Modern Armenian, agreement as a type of connection has disappeared unlike the Old Armenian (Grabar) , in some cases the attributes agree in number. In German, the agreement is not used in cases, if the adjectives and pronouns are not declined, if there is a cardinal number, and in some sayings and set phrases. In this case, adjunction is the type of connection. The attribute does not agree with its determiner if the attribute is postnominal (except for elliptical constructions). Adverbs, infinitives and infinitive constructions are connected by the determiners with adjunction. In Armenian, governance is used as a connection type, if it is expressed by a noun in the oblique cases. In German, the noun in the oblique cases is either an object or a determinative in the genitive case. The noun in the oblique cases becomes attribute, if there is a *preposition + noun* construction and in this case we have governance as a connection type.